Ֆինն նշանավոր փիլիսոփա Իլկա Նիինիլուոտոն ծընվել 1946 թ.։ Չնայած երիտասարդ հասակին, նա մի շարք աշխատությունների հեղինակ է, որոնք հայտնի են ինչպես Ֆինլանդիայի, այնպես էլ այլ երկրների փիլիսոփայական շրջաններում։ Այդ աշխատություններից հատկապես պետք է նշել «Տեսական հասկացությունները և հիպոթետիկ-ինդուկտիվ եզրահանգումները» գիրքը, որը գրված է Ռ. Տոմելայի հեղինակակցությամբ և հրատարակված 1973 թ., «Արդյո՞ք դիտությունը առաջադիմական է» (1984 թ.) ուսումնասիրությունը և տրամաբանության ու փիլիսոփայության մի շարք դասագրքեր և այդ պրոբլեմներին նվիրված բազմաթիվ հոդվածներ։ Պրոֆ. Նիինիլուոտոն ակտիվ գործիչ է փիլիսոփայության բնագավառում։ Նա Հելսինկիի համալսարանի տեսական փիլիսոփայության ամբիոնի վարիչն է, ֆիննական փիլիսոփայական ընկերության նախագահը, «Acta Philosophica Fennica» ամսագրի խմբագիրը։ Նա ակտիվորեն մասնակցում է միջազգային փիլիսոփայական կյանքին։ Նա փիլիսոփայական մի շարք կազմակերպությունների, այդ թվում նաև Սիմվոլիկ տրամաբանության ասոցիացիայի, Գիտության փիլիսոփայության բրիտանական ընկերության անդամ է, եղել է նաև Հոլանդիայում հրատարակվող «Synthese» ամսագրի խմբագիրը 1977—1979 թթ.։

Ստորև հրատարակվող հոդվածում ուրվագծված են ժամանակակից ֆիննական փիլիսոփայության վիճակը, այն հիմնական փիլիսոփայական ու տրամաբանական պրոբլեմները, որոնք հետազոտվում են այսօր Ֆինլանդիայում։

ԻԼԿԱ ՆԻԻՆԻԼՈՒՈՏՈ

(Հելսինկիի համալսարան)

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ

Երբ 1640 թ. հիմնադրվեց առաջին ֆիննական համալսարանը Տուրկուում, փիլիսոփայությանը հատկացվեց պատշաճ ուշադրություն, բացվեց փիլիսոփայության երկու ամբիոն՝ տեսական փիլիսոփայության, որի անդամները դասավանդում էին տրամաբանություն ու մետաֆիզիկա, և գործնական փիլիսոփայության, որն ընդգրկում էր բարոյականությունը և քաղաքականությունը։ Այդ ժամանակից փիլիսոփայությունը կարևոր

դեր է խաղացել Ֆինլանդիայի մշակութային կյանքում՝ հասնելով իր գագաթնակետին XIX դարի ազգային շարժման մեջ, ինչպես նաև մեր դարում, ֆիննական անկախ պետության բարձր հարգանքի արժանացած ակադեմիական կյանքի շրջանակներում։

Ֆիննական փիլիսոփաները, մարդու ռացիոնալ և վերլուծական կարողությունների հանդեպ ունեցած հարգալից ուշադրության շնորհիվ, իրենց առավել նշանավոր ներմուծումը համաշխարհային փիլիսոփայական դանձարանում կատարել են տրամաբանության, իմացաբանության, գործողության տեսության և գիտության փիլիսոփայության բնագավառներում։ Նոր սերունդը շարունակում է այս ավանդույթը՝ հետազոտելով ժամանակակից այնպիսի կարևոր բնագավառներ, ինչպիսիք են տեխնիկայի, իշխանության, կանանց ազատագրման շարժման և սիրո փիլիսոփայական պրոբլեմները։

ԻԴԵԱԼԻԶՄ ԵՎ ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄ

Փիլիսոփա, լրագրող, համալսարանի պրոֆեսոր և պետական գործիչ Յոհան Վիլհելմ Սնելմանը (1806—1881) համարվում է Ֆինլանդիայի «ազգային փիլիսոփան»։ Սնելմանը պատկանում էր հեգելյան դպրոցի «չափավոր ձախերին»։ Նա հաջողությամբ կիրառեց մշտապես զարգացող «բացարձակ ոգու» կոնցեպցիան ոգու մասնավոր դրսևորման՝ «ազգային ոգու» նկատմամբ, որն իր արտահայտությունն է գտնում ազգերի, նրանց լեզվի և գրականության մեջ։ Նա դարձավ XIX դարի ազգային շարժման գլխավոր գաղափարախոսը և տեսաբանը, շարժում, որի արդյունքը եղավ 1917 թ. ֆիննական անկախ պետությունը։

Սնելմանը և նրա հետևորդների մեծամասնությունը պատկանում էին գերմանական իդեալիզմի տիրապետող ուղղությանը, իսկ փիլիսոփայական մատերիալիզմի միակ ջատագովը Վիլհելմ Բոլինն էր (1835—1924)՝ Լյուդվիգ Ֆոյերբախի բարեկամը և նրա գրական ժառանգության կատակատարը։ Բոլինը, որի հիմնական աշխատությունը գրված էր Սպինոզայի ոգով և նվիրված էր կամքի ազատության պրոբլեմին, այդպես էլ չկարողացավ ստանալ Սնելմանից հետո նրա փիլիսոփայության ամբիոնը և աշխատեց որպես գրադարանավար Հելսինկիի համալսարանում (որը 1927 թ. Տուրկուից տեղափոխվել էր երկրի նոր մայրաքաղաքը)։

Նատուրալիզմի և էմպիրիզմի անգլո-սաքսոնական ավանդույթը ներկայացված է Էդվարդ Վեստերմարկի (1862—1939) աշխատություններում, որն, ի դեպ, 1907 թ. մինչև 1930 թ. վարել է Լոնդոնի հայտնի Տնտեսագիտական դպրոցի սոցիոլոգիայի պրոֆեսորի պաշտոնը։ Ամուս-

նության ու բարոյական գաղափարների պատմությանը նվիրված «Մարդու ամուսնության պատմությունը» (1891) և «Բարոյական գաղափարների առաջացումն ու զարգացումը» (1906—1908) իր դասական հետազոտությունների շնորհիվ Վեստերմարկը դարձավ սոցիալական մարդաբանության հիմնադիրներից մեկը։ Վերջերս նորից նկատվում է հետաքրքրություն բարոյականության և հավատի հարցերին նվիրված նրա փիլիսոփայական գործերի նկատմամբ, մի բան, որի մասին վկայում են «Էդվարդ Վեստերմարկ. նրա կյանքը և գիտական ժառանգությունը» աշխատությունների ժողովածու (խմբագիր Տիմոթի Ստրոուպ, Acta Philosophiea Fennica, 1982), ինչպես նաև «Քրիստոնեությունը և բարոյականությունը» (1930) հակակղերական լուսավորչական մտքի գլուխգործոցի առաջին ֆիններեն հրատարակումը (Ոտտավա, 1984)։

Ֆիննական փիլիսոփայական կյանքի երեսնական-հիսնական թվականների ամենանշանավոր դեմքը Հելսինկիի համալսարանի տեսական փիլիսոփայության ամբիոնի պրոֆեսոր Էյնո Կայլան էր (1890—1958), որը 1948 թ. դարձավ ֆինլանդիայի ակադեմիայի տասներկու անդամներից մեկը։ Էսթետ և բնության ռոմանտիկ փիլիսոփա Կայլան հետագայում անդրադարձավ ճշգրիտ իմացաբանությանը և բնագիտության փիլիսոփայությանը՝ աշխարհի «հոլիստական» պատկեր ստեղծելու նպատակով։ Կայլայի այս վիթխարի ծրագիրը մնաց անավարտ, բայց նա մեծ հաջողությամբ կարողացավ ֆիննական հասարակայնությանը ծանոթացնել փորձնական հոգեբանությանը, գեշտալտ հոգեբանությանը, սիմվոլիկ տրամաբանությանը, տրամաբանական էմպիրիզմին և գիտության ժամանակակից փիլիսոփայությանը։ Նրա անհատականության հրմայքը և պերճախոս ու գրավիչ դասախոսություններն ու գրքերը հսկայական ազդեցություն ունեցան հումանիտար և բնական գիտությունների ներկայացուցիչների մի ամբողջ սերնդի վրա։ Կայլայի գործերը հրատարակվել են ֆիններեն, շվեդերեն և գերմաներեն։ Իրականության գաղափարին և զգայական ընկալման բնույթին նվիրված նրա չորս կարևորագույն հետազոտությունները 1979 թ. թարգմանվել են անգլերեն «Իրականությունը և փորձը» վերնագրով՝ Վիեննայի խմբակի աշխատությունների ժողովածուների մատենաշարով (D. Reidel Press)։

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Կայլայի՝ որպես Ֆինլանդիայի ակադեմիայում փիլիսոփայության ներկայացուցչի դիրքը 1961 թ. ժառանգեց Գեորգ Հենրիկ ֆոն Ռայտը (ծնվել է 1916 թ.)։ Հավանականության և ինդուկտիվ տրամաբանության

հարցերի վերաբերյալ վաղ շրջանի իր հետազոտությունները Ֆոն Ռայտը կատարել է Կայլայի ազդեցության տակ, բայց նա կրել է նաև Լյուդվիգ Վիտգենշտայնի աշխատությունների ազդեցությունը։

Վիտգենշտայնի մահից հետո Ֆոն Ռայտը փոխարինեց նրան Քեմբրիջում՝ դասավանդելով այնտեղ 1948—1951 թթ.։ Ֆոն Ռայտը ավստրիացի մեծ փիլիսոփայի ժառանգության հրատարակության երեք խմբագիրներից մեկն է։ Եվ բնական է, որ Ֆոն Ռայտի վաթսունամյակին նվիրված գիտական աշխատությունների միջազգային ժողովածուն կրում է «Վիտգենշտայնյան հետազոտություններ՝ ի պատիվ Գ. Հ. Ֆոն Ռայտի» խորագիրը (Acta Philosophica Fennica, 1977)։

Ֆոն Ռայտի ամենամեծ միջազգային ճանաչումը կապված է նրա՝ որպես դեոնտիկ տրամաբանության հիմնադրի համբավի հետ։ Դեոնտիկ տրամաբանության առարկան են կազմում պարտավորության («պարտադիր է, որ տեղի ունենա...») և թույլտվության («թույլ է տրվում, որ տեղի ունենա...») մոդալություններ պարունակող արտահայտությունները։ 1951 թ. սկսած նա իր գաղափարները զարգացնում է գործողության տեսության կապակցությամբ։ Նրա երկու գլխավոր աշխատությունները՝ «Նորմա և գործողություն» և «Բարության տեսակները» լույս տեսան 1961 թ., իսկ փիլիսոփայական տրամաբանությանը վերաբերող «Ընտիր երկերը» հրատարակվեցին Բլեկվելի կողմից 1984 թ.։ Ֆոն Ռայտի ազդեցությունն ակնհայտ է Սկանդինավիայում նորմաների տրամաբանության բնագավառում Ռիստո Հիլպինենի (ծն. 1943 թ.) և ուրիշների կատարած հետազոտություններում, ինչպես նաև Աուլիս Աառնիոյի (ծն. 1937 թ.) իրավաբանական փաստարկմանն ու իրավունքի փիլիսոփայությանը նվիրված աշխատություններում։

Ֆոն Ռայտն իր «Բացատրություն և հասկացում» (Կոռնելի համալսարանի հրատարակչություն, 1971) գրքում պաշտպանում է հումանիտար և բնական գիտությունների միջև տարբերության կարևոր նշանակության «հակապոզիտիվիստական» գաղափարը։ Նա գտնում է, որ կամային գործողությունների հասկացումը տարբերվում է բնության երևույթների պատճառական բացատրությունից։ Այս հարցերի շուրջը բանավեճը շարունակվել է Ռայմո Տուոմելայի «Մարդկային գործողությունը և նրա բացատրությունը» (D. Reidel, 1977) գրքում։ Հակադրվելով Ֆոն Ռայտին՝ Տուոմելան պաշտպանում է այն տեսակետը, որ մարդկային գործողությունները նույնպես կարող են ստանալ պատճառական բացատրություն, եթե հաշվի առնվեն մարդկանց պահանջմունքները և մտադրությունները։ Այս պրոբլեմի վերաբերյալ Ֆոն Ռայտի ամենավերջին տեսակետը ներկայացված է նրա «Ազատություն և գետերմինացիա» աշխա-

տությունում (Acta Philosophica Fennica, 1980)։ Ինգմար Պյոռնի (ծն. 1935 թ.) «գործողության տեսությունը և սոցիոլոգիական գիտությունները» (D. Reidel, 1977) և Տուոմելայի «Սոցիալական գործողության տեսություն» (D. Reidel, 1984) գրքերում գործողության դասական տեսությունը տարածվել է սոցիալական գործողության պրոբլեմների վրա։

ՖԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ֆոն Ռայտից բացի Կայլայի ամենաազդեցիկ աշակերտներից են Էրիկ Ստենիուսը (ծն. 1911 թ.) և Օյվա Կետոնենը (ծն. 1913 թ.)։ Երկուսն էլ լրջորեն զբաղվել են մաթեմատիկական տրամաբանությամբ և բնական գիտություններով։ Տրամաբանության, իմացաբանության և լեզվի փիլիսոփայության վերաբերյալ Ստենիուսի աշխատությունները, որոնք տեղ են գտել «Վիտգենշտայնի Տրակտատը» (Blackwell, 1960) գրքում և ի մի բերվել «Քննադատական հետազոտություններում» (Acta Philosophica Fennica, 1972), վերլուծական փիլիսոփայությունը ներկայացնում են նրա ամենախիստ և ստույգ ձևով։ Ստենիուսի հոբելյանի առթիվ «Փիլիսոփայական վերլուծության հետազոտություններ» վերնագրով գիտական աշխատությունների մի ժողովածու է հրատարակվել Ինգմար Պյոռնի խմբագրությամբ (Acta Philosophica Fennica, 1981)։

Կենտոնենը, որը փոխարինել է Կայլային Հելսինկիում, իր վաղ շրջանի հետազոտությունները կատարել է մաթեմատիկական տրամաբանության և գիտության պատմության ու փիլիսոփայության բնագավառում։ Նրա աշխատությունների վերջին երկու՝ «Սահմանի մասին» (Օտտավա, 1980) և «Մարդ լինելու մասին» (Օտտավա, 1981) ժողովածուներում քննարկվում են մի շարք պրոբլեմներ, այդ թվում՝ գիտության բարոյագիտությունը, բժշկագիտության փիլիսոփայությունը, հոգեբուժության բնույթը, մարդու կոչումը։

ՀՆԱՐԱՎՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐ

Յաակո Հինտիկան (ծն. 1929 թ.) ուսանել է Ֆոն Ռայտի մոտ։ Նա հասել է մեծ հաջողությունների փիլիսոփայական հետազոտությունների խթանման և կազմակերպման գործում։ Հինտիկան վերլուծական ուղղության ամենահայտնի հեղինակություններից մեկն է. տրամաբանությանը և իմացաբանությանը նվիրված նրա աշխատությունները քաջ հայտնի են Կալիֆոռնիայից մինչև Նովոսիբիրսկ։ Նա աշխատում է Ֆլորիդայի պետական համալսարանում. Դ. Ռայդել հրատարակչության «Synthese»

ամսագրի և «Synthese գրադարան» մատենաշարի հետ իր համագործակցության շնորհիվ նա աշխարհի ամենաազդեցիկ փիլիսոփա-խմբագիրներից մեկն է։

Հինտիկան մոդալ տրամաբանության համար «հնարավոր աշխարհների» իմաստաբանության և ասույթային դիրքորոշումների տեսության հիմնադիրներից մեկն է։ Նրա դասական «Գիտելիք և հավատ» աշխատությունը լույս է տեսել 1962 թ. (Կոռնելի համալսարանի հրատարակչություն), որին հետևեցին «Մոդալականության մոդելները» (1969) և «Ինտենսիոնալության կողմնորոշումները» (1975)։ Կիրառելով դիստրիբուտիվ նորմալ ձևերի գաղափարը՝ Հինտիկան նկատելի ներդրում կատարեց իմաստաբանական ինֆորմացիայի տեսությունում և ինդուտիվ տրամաբանության բնագավառում։ Որոշ չափով Վիտգենշտայնի «Լեզվական խաղերի» կոնցեպցիայի ազդեցության շնորհիվ Հինտիկան զարգացրեց նաև բնական լեզվի նոր իմաստաբանական տեսություն, որը նա անվանեց խաղերի տեսության վրա հենվող իմաստաբանություն։ Համակցելով իր իմացաբանական տրամաբանությունը և խաղերի տեսության վրա հենվող իմաստաբանությունը՝ Հինտիկան «Հարցերի իմաստաբանություն և իմաստաբանության հարցեր» աշխատությամբ (Acta Philosophica Fennica, 1976) հարցերի տրամաբանության նոր ուղղության հիմքը դրեց։ Ներկայումս նա այդ գաղափարները տարածում է երկխոսությունների տրամաբանության վրա, որի կիրառման օրինակներ կարող են ծառայել Շերլոկ Հոլմսի տրամաբանությունը և գիտական հայտնագործության տրամաբանությունը։

ԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈԴ

50-ական թվականներից ի վեր, երբ Կայլան ուսումնասիրում էր քվանտային մեխանիկայի հիմունքները, ֆիննական փիլիսոփաները մեծ ուշադրություն դարձրեցին գիտական մեթոդի հետ առնչվող երկու կարևոր պրոբլեմների վրա։ Դրանցից մեկը վերաբերում էր սոցիալական և հումանիտար գիտություններում բացատրության բնույթի վերը հիշատակված հարցին։ Մյուսը՝ մասամբ շարունակելով Ֆոն Ռայտի վաղ շրջանի գործերը և մասամբ էլ հենվելով ինդուկտիվ տրամաբանության Կառնապի կոնցեպցիայի Հինտիկայի վերաձևակերպման վրա, գործ ունի հավանականության ու ինդուկտիվ մտահանգումների բնույթի հետ։ Ինդուկցիայի ֆիննական դպրոցը Ֆոն Ռայտից ու Հինտիկայից բացի ներկայացնում են Ռիստո Հիլպինենը, Ռայմո Տաումելան, Ցուհանի Պիետա-

րինենը (ծն. 1938 թ.), Իլկա Նիինիլուոտոն (ծն. 1946 թ.) և Յան Ֆոն Պլատոն (ծն. 1951 թ.)։

70-ական թվականներին Տուոմելայի «Տեսական հասկացություններ» (Շպրինգեր հրատարակչություն, 1973) ու Վեյկո Ռանտալայի (ծն. 1938 թ.) «Սահմանելիության հարցեր» (Acta Philosophica Fennica, 1977) գրքերի շնորհիվ հետազոտությունների կենտրոնական թեման դարձավ գիտական տեսությունների կառուցվածքն ու զարգացումը։ Այս ժամանակաշրջանում ֆիննական փիլիսոփաները մասնակցեցին գիտելիքի զարգացման և գիտական առաջընթացի հարցերին նվիրված միջազգային բանավեճերին։ Նիինիլուոտոյի «Առաջադիմո՞ւմ է արդյոք գիտությունը» գրքում (D. Reidel Press, 1984) վերլուծվում են գիտական տեսակետների փոփոխությունները «գիտական ռեալիզմի» ոգով, իսկ Մատի Սինտոնենի (ծն. 1951 թ.) «Գիտական բացատրության պրագմատիկան» մենագրությունը (Acta Philosophica Fennica, 1984) քննարկում է բացատրությունների փաստարկման բնույթը։

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Փիլիսոփայության պատմության հետազոտությունները Ֆինլանդիայում լայն տարածում ունեն։ Պլատոնին ուսումնասիրել են Յուսի Տենկուն (ծն. 1917 թ.), Հոլգեր Թեսլեֆը (ծն. 1924 թ.) և Յաակո Հինտիկան։ Լաուրի Ռոոկտիլան (ծն. 1934 թ.) քննարկել է Արիստոտելի մետաֆիզիկան։ Արիստոտելյան մոդալականության տեսության Հինտիկայի մեկնաբանությունը, որը ներկայացված է նրա «Ժամանակ և անհրաժեշտություն» (Օքսֆորդի համալսարանի հրատարակչություն, 1973) մենագրությունում, շարունակել է Սիմո Կնուուտիլան (ծն. 1946 թ.)՝ ներառելով արիստոտելյան սխոլաստիցիզմը և նոմինալիստական տրամաբանությունը։ Տենկուն վերջերս հրատարակեց «Հին և միջնադարյան բարոյագիտական փիլիսոփայություն» (Gaudeamus, 1981) տեքստերի ժողովածուն։

Կարևոր տեղ են գրավում ժամանակակից տրամաբանության, իմացաբանության և ոգու փիլիսոփայության պատմության հետազոտությունները։ Դեկարտին ուսումնասիրել է Լիլի Ալանենը (ծն. 1941 թ.), Լայբնիցին՝ Ռայլի Կաուպին (ծն. 1920 թ.), Կանտին՝ Հինտիկան, Բրեդլիին՝ Տիմո Այրակիսինենը (ծն. 1947 թ.), Ֆրեգեին՝ Լեյլա Հաապարանտան (ծն. 1954 թ.), Ջ. Դ. Բրոուդին՝ Սեպո Կիվինենը (ծն. 1933 թ.), Վիտգենշտայնին՝ Ֆոն Ռայտը, Ստենիուսը, Հինտիկան, Լարս Հերցբերգը (ծն. 1943 թ.), Անդրե Մաուրին (ծն. 1944 թ.) և Հեյկի Նիյմանը (ծն. 1946 թ.)։

Վերջերս Էսա Սաարինենը (ծն. 1953 թ.) հրատարակեց Սարտրին նվիրված առաջին ֆիննական հետազոտությունը՝ «Սարտր. վախի, զզվանքի և ընտրության փիլիսոփայություն» (Fanzine, 1983)։ Գործնական փիլիսոփայության պատմությունը ներկայացված է Հոբսին նվիրված Տենկուի հետազոտություններում, Կիերկեգորին նվիրված՝ Հելգե Ուկկոլաի (ծն. 1921 թ.), Մարքսին նվիրված՝ Ռեյո Վիլենիուսի (ծն. 1930 թ.) և Յուհա Մանինենի (ծն. 1945 թ.), Նիցշեին նվիրված՝ Տարմո Կունասի (ծն. 1942 թ.), Գանդիին նվիրված՝ Ունտո Տեհտինենի (ծն. 1927 թ.) աշխատություններում։ Վերջին տարիներին ֆիննական փիլիսոփայության պատմության նկատմամբ առաջացած հետաքրքրության մասին են վկայում Մանինենի ու Վիլենիուսի գործերը՝ նվիրված Սնելմանին ու Բոլինին։

ԱՅԼ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեև հետպատերազմյան ֆիննական փիլիսոփայության մեջ գերիշխում էր այսպես կոչված վերլուծական փիլիսոփայության ավանդույթը, դեպի փիլիսոփայական տրամաբանությունը, լեզվի փիլիսոփայությունը և գիտության փիլիսոփայությունը նրան բնորոշ հակումով, այնուամենայնիվ դա բոլորովին էլ չի նշանակում, թե ուրիշ ուղղություններն անհայտ էին փիլիսոփայական հասարակայնությանը։ Գերմանական իդեալիզմը քննարկվել է Յ. Է. Սալոմաայի (1891—1960) մի շարք պատմական գործերում, և նրա ազդեցությունը զգացվում է նաև Էրիկ Ալմանի (1892—1952) բարոյագիտությանը և փիլիսոփայական մարդաբանությանը վերաբերող գողտրիկ հետազոտություններում։ Ֆենոմենոլոգիական փիլիսոփայությունը ոգևորել է Սվեն Կրոնին (ծն. 1903 թ.), որը վերջերս լույս ընծայեց իր փիլիսոփայական հայացքներն ամբողջացնող «Մարդը, բնությունը և լոգոսը» (Gummerus, 1981) մենագրությունը։ Հուսեռլի և Հայդեգերի ազդեցությունն է կրել հոգեբան Իրյո Ռեենպաան (1894—1976), հոգեբան Լաուրի Ռաուհալան (ծն. 1914 թ.) և մի շարք ավելի երիտասարդ փիլիսոփաներ, որոնք միաժամանակ հետաքրքրվում են ֆենոմենոլոգիայով ու մարքսիստական փիլիսոփայությամբ։

Դիալեկտիկական մատերիալիզմին նվիրված առաջին ակադեմիական փիլիսոփայական դիսերտացիան ներկայացրել է Պերտի Լինդֆորսը (ծն. 1927 թ.)։ Այնուամենայնիվ կասկածից վեր է, որ ամենահայտնի ֆինները մարքսիզմի պատմության մեջ Օտտո Վիլե Կուուսինենն է (1881—1964), որը Հելսինկիում ուսումնասիրել է գեղագիտություն, 20-ական թվականների սկզբին տեղափոխվել է Սովետական Միություն և

հասել ակադեմիկոսի կոչման։ Կուուսինենը «Մարքսիզմ-լենինիզմի հիմունքները» (Մ. 1960) հեղինակավոր ուսումնական ձեռնարկի գլխավոր խմբագիրն է։ Ակադեմիական կոչում չունեցող, սոցիալիստական կամ կոմունիստական կուսակցությունների հետ կապված մարքսիստական հեղինակներից ամենանշանավորը երևի Տուրեն Լեհենն էր (1893—1977) իր բանավիճային «Բանվոր դասակարգի աշխարհայացքը» (1950) հայտնի աշխատությամբ և Ատոս Վիտանենը (1906—1979)՝ Լենինի մասին գրքի հեղինակը։

Արևմտյան երկրներում զարգացում ստացած մարքսիստական փիլիսոփայական ուղղությունները և ժամանակակից ֆրանսիական փիլիսոփայությունը գրավել են նաև փիլիսոփայական հետաքրքրություններ ունեցող հասարակագետների երիտասարդ սերնդի ուշադրությունը։ Այսպես, Դան Ստեյնբոկի (ծն. 1954 թ.) գրքերում զգացվում է ֆրանկֆուրտյան դպրոցի քննադատական տեսության և ֆրանսիական ստրուկտուրալիզմի ազդեցությունը։

Լինելով փոքր ազգ, ֆինները հնարավորություն չեն ունեցել փիլիսոփայական գիտության առանձին ճյուղերում նեղ մասնագիտացման համար։ Ֆիննական ակադեմիական փիլիսոփայության լավագույն ներկայացուցիչներն իրենց հետազոտություններում ազատորեն անցել են փիլիսոփայության մի բնագավառից մյուսը։ Օրինակ, Ֆոն Ռայտը Ֆինլանդիայում հայտնի է Դոստոևսկու, Տոլստոյի, հումանիզմի, տեխնիցիզմի վտանգի մասին իր աշխատություններով։ Ժամանակակից իրավիճակին հատուկ են տարբեր ուղղությունների հետաքրքրական խառնուրդը և նախկինում մեկուսացած փիլիսոփայական դպրոցների միջև կապեր հաստատելու փորձերը։ Եվրոպական «մայրցամաքային» փիլիսոփայությունը և անգլիական վերլուծական փիլիսոփայությունը միաձուլվել են Ֆոն Ռայտի «Վերլուծական հերմենևտիկայի» և Հինտիկայի կողմից առաջ քաշված՝ Կանտի ու Հուսեռլի ուսմունքների մեկնություններում։ Հելսինկիում 1984 թ. կայացած Հեգելյան միջազգային կոնգրեսը ցուցադրեց, որ դիալեկտիկական և վերլուծական ուղղությունները կարող են աղերսներ ունենալ և գոնե մասամբ փոխադարձաբար թարգմանել իրենց հատուկ փիլիսոփայական լեզուների «բարբառային» արտահայտությունները։

ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսօր փիլիսոփայության ամբիոններ ունեն Հելսինկիի (4 ամբիոն) Տուրկուի (2), Տամպերեի (2), Յիվասկիլայի (1) համալսարանները և Աբոյի Ակադեմիան (1)։ Մասնագետ փիլիսոփաների «ընկերակցության»

մեջ են մտնում նաև Ֆինլանդիայի ակադեմիայի մի շարք դասախոսներ, ասիստենտներ և ոչ մշտական հետազոտողներ։ Ի տարբերություն որոշ այլ երկրների, ֆիննական համակարգում փիլիսոփայությունից տարանջատված են այնպիսի հարակից բնագավառները, ինչպիսիք են գաղափարների պատմությունը, գեղագիտությունը, կրոնի փիլիսոփայությունը, ընդհանուր իրավագիտությունը, մաթեմատիկական տրամաբանությունը։ Համալսարաններում փիլիսոփայությունը կարելի է ընտրել որպես քննությունների գլխավոր առարկա, բայց փիլիսոփայությունը հանդես է գալիս հաճախ նաև որպես երկրորդ կամ երրորդ քննական առարկա։ Այնուհետև, բազմաթիվ ֆակուլտետների «ընդհանուր ուսուցման» ծրագրերում տեղ են հատկացված տարրական տրամաբանությանը, փաստարկման տեսությանը, մեթոդաբանությանը և գիտության փիլիսոփայությանը։ Ցավոք, վերջին տասնամյակներում փիլիսոփայությունը միջնակարգ դպրոցներում կորցրել է անցյալում ունեցած իր բարձր դրվածքը։

Համալսարանների հետ իր սերտ կապերով հանդերձ, ֆիննական փիլիսոփայությունը Սնելմանի օրոք ապրած իր ծաղկման ժամանակաշրջանից սկսած մեծ ազդեցություն է գործել նաև գիտական շրջանակներից դուրս, Ֆինլանդիայի երկու պաշտոնական լեզուներով՝ ֆիններենով և շվեդերենով գրված աշխատությունների շնորհիվ։ Վեստերմարկի գործերը մտքի ազատության մասին, Կայլայինը՝ սահմանային իրավիճակների վերաբերյալ, Ֆոն Ռայտինը՝ մարդու իրավունքների, Կետոնենինը՝ համալսարանական կրթության, Վիլենիուսինը՝ դպրոցական կրթության վերաբերյալ՝ ահա այսպիսիք են ազդեցության լավագույն օրինակները։ Կարծում ենք, որ «մասնակից լինելու» փիլիսոփայության այդ ավանդույթի հիման վրա է ծագել ժամանակակից ակտիվ հետաքրքրությունն այնպիսի լայն բնագավառների հանդեպ, ինչպիսիք են մարդու փիլիսոփայությունը կամ մշակույթի փիլիսոփայությունը։

Ֆինլանդիայի փիլիսոփայական ընկերությունը, որը հիմնել է 1873 թ. Սնելմանին հաջորդած Տիոդոլֆ Ռեյնը, 1980-ական թվականներին կազմակերպեց «մեկ բառի» փիլիսոփայական սեմինարներ Ճշմարտության, Արժեքների, Սիրո, Իրի, Ազատության վերաբերյալ։ Արդեն հարցադրումների այս ցուցակը հուշում է, որ ֆիննական փիլիսոփաներն իրենց առջև դնում են երկակի բնույթի խնդիրներ. մի կողմից՝ շարունակել ավանդական փիլիսոփայական բնագավառների մշակումը, մյուս կողմից՝ նվաճել հարցադրումների նոր կարևոր ասպարեզներ։

Հրատապ հասարակական հարցերի հետ առնչվող փիլիսոփայական նոր ուղղության օրինակ կարող է ծառայել տեխնիկայի փիլիսոփայությունը, որը վերջերս քննարկել են Ֆոն Ռայտը, Պիետարինենը և Նիինիլ-

ուտոն։ Այդ ուսումնասիրությունների կենտրոնում են մարդու, տեխնիկայի ու բնության փոխհարաբերությունը վերաբերող իմացաբանական ու բարոյական հարցերը։ Դրանց հետ կապված գիտության բարոյականության հարցերը և պարտադրական սոցիալական կառուցվածքները հետազոտել է Այրաքսինենը։

Մեկ այլ օրինակ է կանանց ազատագրության հարցի վերաբերյալ էսա Սաարինենի աշխատությունը։ Սաարինենը իր կրթությունը ստացել է տրամաբանության ու լեզվի փիլիսոփայության բնագավառում, բայց լայն հասարակայնությանը հայտնի է բազմազան հարցերի՝ սեռաբանությունից մինչև ռոկ, պոեզիա և ամերիկյան ապրելակերպ, մշակութաբանական արգասավոր մեկնաբանություններով։ Նա Սառա Հեյնամաայի հետ գրել է «Կինը էականության տեսակետից» (1983 թ.) գիրքը, որտեղ Սարտրի էկզիստենցիալիզմի տեսակետից սուր քննադատության են ենթարկվում կանանց հարցի էականական մոտեցման սխալ մեկնաբանությունները։ Սաարինենը Ալանենի ու Նիինիլուոտոյի հետ խմբագրել է «Սիրո փիլիսոփայություն» (1948) ժողովածուն, որը պարունակում է ֆիննական քսանմեկ փիլիսոփաների նոր հետազոտությունները սիրո բնույթի ու տեսակների վերաբերյալ։